ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ (ՀԵԿԱ)

ՀՀ Կին Ձեռներեցների Ցանց (ՀՀ ԿՁՑ)
FCEM (Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիա) Հայաստան
WED (Կանանց ձեռներեցության շաբաթ) Հայաստան - դեսպան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սեպտեմբեր 2018

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՅ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագրի սոցիալական նախաձեռնությունների ամփոփում

2017թ. նոյեմբերից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրը:
Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Կառավարության կողմից:
«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագրի նպատակն է՝ բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ զարգացնելով նրանց հմտություններն ու կարողությունները, աջակցելով ինքնավստահության բարձրացմանն ու մոտիվացմանը:

Ծրագրի շրջանակներում ընտրված համայնքների համար իրականացվելու են կարողությունների զարգացման եռօրյա դասընթացներ, որոնց նպատակն է՝ **ՀՀ մարզերում բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով**:
Դասընթացի արդյունքում կազմավորվել են համայնքային կանանց խորհուրդներ, որոնք մասնակցել են առաջին փուլի փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի (€100-200) համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար:

Համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների փուլն արդեն ամփոփվել է: Հայտնի են այն կանանց խորհուրդները, որոնք իրականացնելու են սոցիալական նախաձեռնություններն իրենց համայնքերում՝

ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի
Ալավերդու կանանց խորհուրդը ներկայացրել է «Դեբեդը կյանքի աղբյուր է» սոցիալական նախաձեռնությունը, որի արդյունքում Դեբեդ գետը կմաքրվի աղբից:
Խորհրդի լիդեր՝ Անուշ Մոսինյան:

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՅ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան
Նոյեմբերյանի կանանց խորհուրդը ներկայացրել է «ՄԱԼԻԺԱՌՈՒ» էկո տոպրակների արտադրության նախաձեռնությունը՝ դրանով լուծելով էկոլոգիական խնդիր:
Խորհրդի լիդեր՝ Լիլիթ Գիշյան:

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վահան
Վահան գյուղի կանանց խորհուրդը ներկայացրել է «Ապագան Վահանում» սոցիալական նախաձեռնությունը, որի շրջանակներում նախատեսվում է վերազինել Վահան գյուղրի միջնակարգ դպրոցի դահլիճը՝ ձևավորելով բեմը դեկորատիվ վարագույրներով:
Խորհրդի լիդեր՝ Մարիամ Ապրեսյան:

ՀՀ Արարատի մարզ, գ. Սուրենավան
Սուրենավանի կանանց խորհուրդը ներկայացրել է «Կանգառ Սուրենավանում» սոցիալական նախաձեռնությունը: Նախաձեռնության արդյունքում Սուրենավան գյուղում, միջպետական ճանապարհին կտեղադրվի հանրային օգտագործման կանգառ:
Խորհրդի լիդեր՝ Մանե Շահվերդյան:

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ
Եղվարդի կանանց խորհուրդը ներկայացրել է «Հեքիաթով զարկ ընթերցանությանը» սոցիալական նախաձեռնությունը: Նախաձեռնության արդյունքում Եղվարդի քաղաքային գրադարանում կբացվի հեքիաթի անկյուն երեխաների համար:
Խորհրդի լիդեր՝ Թամարա Գևորգյան:

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Ներքին Խնձորեսկ
Ներքին խնձորեսի կանանց խորհուրդը ներկայացրել է գյուղի դպրոցում, անգլերեն լեզվի դասասենյակի հատակի վերանորոգման սոցիալական նախաձեռնության ծրագիրը:
Խորհրդի լիդեր՝ Հերմինե Դիլանչյան

ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Արենի
Արենու կանանց խորհուրդը նախատեսում է սոցիալական նախաձեռնության շրջանակներում կարի դասընթացների անցկացնել Արենի և շրջակա գյուղերից 30-40 կնոջ համար:
Խորհրդի լիդեր՝ Արմենուհի Ծատուրյան

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՅ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով ծրագիր»
մոնիթորինգային այց ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագրի շրջանակներում՝ կարողությունների զարգացման դասընթացի արդյունքում կազմավորվել են **համայնքային կանանց խորհուրդներ,** որոնք **մասնակցել են փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթին (€100-200) համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար**:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի կանանց խորհուրդը, խորհրդի ղեկավար Թամարա Գևորգյանի ղեկավարությամբ, ներկայացրեցին իրենց համայնքային սոցիալական նախաձեռնությունը, այն է՝ **«Հեքիաթով զարկ ընթերցանությանը»**: Նախաձեռնության արդյունքում Եղվարդի քաղաքային գրադարանում **կստեղծվի մանկական անկյուն**:

Նախաձեռնությունը կծառայի, ոչ միայն Եղվարդ համայնքի փոքրիկ բնակիչների համար, այլև այն հնարավորություն կտա հարակից համայնքերի երեխաներին ևս ներգրավված լինել այս նախաձեռնության շրջանակներում կազմակերպվող բոլոր միջոցառումներին և գրքի ընթերցմանը:

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» **ծրագրի ներկայացուցիչ Լեյլա Լոմիան այցելեց Եղվարդի կանանց խորհրդի անդամներին և տեղում ծանոթացավ նախաձեռնությանը**:ՀՀ բոլոր մարզերում իրականացվելու են համայնքային և միջհամայնքային՝ նախաձեռնություններ և ստեղծվելու են սոցիալական ձեռնարկություններ՝ ձևավորված կանանց խորհրդի անդամների միջոցով:

2017թ. նոյեմբերից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ ողջ տարածքում: Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Կառավարության կողմից:

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՅ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ՀԵԿԱ-ն ամփոփել է ՀՀ տարբեր մարզերում սոցիալական ձեռնարկություններ ստեղծելու ծրագրերի արդյունքները

2017թ. նոյեմբերից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Կառավարության կողմից:

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագրի նպատակն է՝ բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ զարգացնելով նրանց հմտություններն ու կարողությունները, աջակցելով ինքնավստահության բարձրացմանն ու մոտիվացմանը:

Ծրագրի շրջանակներում ընտրված համայնքների համար իրականացվել են կարողությունների զարգացման եռօրյա դասընթացներ, որոնց նպատակն էր՝ **ՀՀ մարզերում բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով**:

Դասընթացի արդյունքում կազմավորվել են համայնքային կանանց խորհուրդներ, որոնք մասնակցել են առաջին փուլի փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի (€100-200)՝ համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար:

Դասընթացի երկրորդ փուլում, համայնքային կանանց խորհուրդների լիդերները մասնակցեցին եռօրյա կլոր սեղան քննարկում-դասընթացին, որի արդյունքում ներկայացրեցին իրենց սոցիալական ձեռնարկության գաղափարները (€ 700-1000), որոնցից լավագույները կարժանանան դրամաշնորհի՝ ՀԵԿԱ-ի կողմից:

Հայտնի են այն կանանց խորհուրդները, որոնք ստեղծելու են իրենց սոցիալական ձեռնարկությունները հետևյալ համայնքներում՝

ՀՀ Շիրակի մարզ, գ.Կրաշեն
Կրաշենի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Ինկուբատորային տնտեսություն »**սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Հռիփսիմե Պետրոսյան

ՀՀ Տավուշի մարզ, գ.Կոթի
Կոթիի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Հացի և լավաշի արտադրամաս»**սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Թազագյուլ Անդրեասյան

ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Բյուրական
Բյուրականի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Օշարակների արտադրություն»**սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Անի Սուքիասյան

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Հայկավան
Հայկավանի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Ջերմատուն»** սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Եսենիա Սիմոնյան

ՀՀ Արարատի մարզ, գ. Նիզամի
Նիզամիի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Ինկուբատորային տնտեսություն»**սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Լաուրա Քոչարյան

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ճամբարակ
Ճամբարակի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Կլինիկական լաբարատորիա»**սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Քրիստինե Ապրեյան

ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Եղեգնաձորի կանանց խորհուրդը իրականացնելու է **«Ջերմոց-թեյարան»** սոցիալական ձեռնարկությունը:
Խորհրդի լիդեր՝ Կարինե Մովսիսյան

ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպանի այցը Նուռիկ կենտրոն

2018թ.-ի սեպտեմբերի 8-ին Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան պրն. Յոգեշվար Սանգվանը և տիկինը, ինչպես նաև Հնդկաստանի դեսպանատան հյուպատոս պրն. Ջոյդիպ Մանդալը և տիկինը այցելեցին ՆՈՒՌԻԿ Կենտրոն:

Նրանք ծանոթացան ՆՈՒՌԻԿ Կենտրոնի և rafting.am Armenia -ի գործունեությանը, այցելեցին Ախթալայի վանք:

Հայաստանում Հնդկաստանի դեսպան պրն. Յոգեշվար Սանգվանը և հյուպատոս պրն. Ջոյդիպ Մոնդալը իրականացրին ռաֆթինգ Դեբեդ գետի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ՀԵԿԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՆԱԵՎ՝

https://web.facebook.com/ngoaywa/

https://twitter.com/Armenian_Women

https://www.flickr.com/photos/134471928@N05

https://www.youtube.com/user/aywaheka

+374 (94/99) 58 07 87

info@aywa.am

Հարգելի՛ ընթերցող,

Մենք ուրախ կլինենք ստանալ Ձեր արձագանքը, կարծիքն ու տպավորությունները մեր գործունեության վերաբերյալ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: ՈԳԵՇՆՉՈՒՄ: ՀԶՈՐԱՑՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա՝ (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2004թ.:

ՀԵԿԱ-ի **նպատակն է՝** նպաստել Հայաստանի Հանրապետության զարգացմանը՝ այդ գործընթացին ի նպաստ բերելով կանանց ներուժը՝ խթանելով կանանց դերի բարձրացմանը ՀՀ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, բիզնես և այլ ոլորտներում:

ՀԵԿԱ-ի խնդիրներից են՝ խթանել և զարգացնել կանանց ձեռներեցությունը և ինքնազբաղվածությունը, խրախուսել կանանց համար աշխատատեղերի ստեղծումը, զարգացնել կանանց մասնագիտական և աշխատանքային կարողությունները, խթանել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, կանանց իրազեկվածության մակարդակի բարձրացումը՝ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, աջակցել կանանց և աղջիկների առողջության պահպանմանը, խթանել կանանց ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործում, խթանել կանանց ներգրավվածությունը ազգային և ՏԻՄ մակարդակներում, աջակցել ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու ամրապնդմանը, աջակցել միջմշակութային հաղորդակցությանը և երկխոսությանը, ձևավորել հաղորդակցության հարթակներ, ձևավորել/ընդլայնել կանանց ֆորմալ խմբերի կապերը, զարգացնել կանանց ֆորմալ և ոչ-ֆորմալ խմբերի կարողությունները, տրամադրել թիրախավորված տեղեկատվական աջակցություն կանանց ֆորմալ և ոչ-ֆորմալ խմբերին, նպաստել ազգային արժեքների պահպանմանը, աջակցել տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանը:

ՀԵԿԱ-ն գործունեություն է ծավալում ՀՀ ողջ տարածքում: ՀԵԿԱ-ի հիմնական շահառուներն են՝ 13 տարեկանից բարձր աղջիկներն ու կանայք: Ստեղծման օրվանից ի վեր ՀԵԿԱ-ն իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր՝ ավելի քան 30.000 շահառուների ներգրավմամբ: ՀԵԿԱ-ի ծրագրերը մասնավորապես ուղղված են ՀՀ համայնքների զարգացմանը, ընտանիքների տնտեսական կայունության ապահովմանը, կանանց տնտեսական մասնակցության խթանմանը, առաջնորդության զարգացմանը, համայնքային գործընթացներում կանանց ներգրավմանը, կանանց առողջության պահպանմանը, որպես պատասխանատու քաղաքացի՝ կանանց իրազեկման և գիտելիքների մակարդակի բարձրացմանը, հայկական մշակույթի և ավանդույթների տարածմանը:

ՀԵԿԱ-ն որոշ ծրագրերում ապահովում է հասարակության ավելի լայն շերտերի մասնակցությունը՝ այսպիսով բարձրացնելով հասարակական իրազեկության մակարդակը կանանց հիմնահարցերի վերաբերյալ և կառուցելով առողջ մթնոլորտ՝ հասարակության մեջ խրախուսելով և տարածելով հանդուրժողականություն և համերաշխություն հասարակության բոլոր շերտերում:

ՀԵԿԱ-ի ռազմավարական ուղղություններն են.

.Կանանց զբաղվածություն և ինքնազբաղվածություն

.Հանրային առաջնորդություն

.Մասնագիտական համայնքներ/ ցանցեր

ՀԵԿԱ-ն հիմնադրել է.

Կանանց աջակցության կենտրոնների ցանց (ներկայում՝ Երևանում և Լոռու մարզում): Կանանց աջակցության կենտրոնների բազմաբնույթ ծառայություններից ամեն օր օգտվում են բազմաթիվ կանայք և աղջիկներ:

Երիտասարդական ռեսուրս կենտրոններ (Վայոց Ձորի մարզի 10 գյուղական համայնքներում), որոնց նպատակն է՝ նպաստել գյուղական բնակավայրերի կանանց ու երիտասարդների առօրյայի կազմակերպմանը և համայնքային որոշումների կայացման գործընթացին ներգրավմանը:

ՀԵԿԱ-ն հիմնել և համակարգում է.

.ՀՀ Կին ձեռներեցների ցանցը, որը միավորում է ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 320 կին ձեռներեցների: ՀՀ Կին ձեռներեցների ցանցը, ի դեմս ՀԵԿԱ-ի, հանդիսանում է Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի (FCEM) անդամ:

.«Աղջիկների երկիր» շարժումը, որը միավորում է ՀՀ տարբեր մարզերում բնակվող 13-22 տարեկան 2.500-ից ավելի աղջիկների:

ՀԵԿԱ-ն ունի անդամության երկու տեսակ՝ անհատ և կորպորատիվ անդամություն՝ ի դեմս ՀՀ Կին ձեռներեցների ցանցի:

ՀԵԿԱ-ն անդամակցում է մի շարք միջազգային կառույցների, այդ թվում՝ FCEM (www.fcem.org), WECF (www.wecf.eu), ENYC (www.eycn.org)

WED (www.womensday.org).